

ՎԵՆԵՏԻԿԻ ՄԽԻԹԱՐՅԱՆՆԵՐԻ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

(Միարանության հիմնադրման 250-ամյակի առթիվ)

Փ. Փ. ԱՆԹՈՆՅԱՆ

Մխիթարյան միաբանությունը իր 250-ամյա գոյության ընթացքում ղգալի ծառայություններ է մատուցել հայրենի գիտության և մշակույթի զարգացմանը:

Որպես հոգևոր միաբանություն, Մխիթարյանները առաջին հերթին հետապնդում էին կրոնական նպատակներ, սակայն մեծ են եղել այն ջանքերը, որ նրանք գործադրել են հայագիտության տաղերը բնագավառների առաջընթացի համար: Այս ուղղությամբ կատարած առաջին քայլերից է Մխիթար Սեբաստացու «Դուռն բերականության աշխարհաբար լեզուին հայոց»¹ երկասիրությունը, որով վենետիկյան Մխիթարյանները հիմք են դնում քերականագիտական ծավալուն աշխատանքի: Նրանք օգտագործում են նախորդ հայ քերականագետների փորձը, հետադրոտում հայ մատենագրության հարուստ ժառանգությունը, ստուգում յուրաքանչյուր բառի ձևաբանական և շարահյուսական հատկանիշները, համեմատում և ճշգրտում նկատված օրինաչափությունների տեսակն ու տեղը: Նրանք հմրուպական քերականագիտության նվաճումներն էլ հաշվի առնելով՝ հայ քերականագիտության գիտական նոր համակարգ ու տերմինաբանություն են ստեղծում: Շուրջ երկու դար լայնորեն կիրառության են գրվում Վենետիկի մխիթարյան քերականներ Մ. Չամչյանի, Գ. Ավետիքյանի, Ա. Բագրատունու սույն բնագավառի հայտնի երկերը², որոնք մեծ դեր են կատարել դասական հայերենի ուսումնասիրության ժամանակակից դրաբարի և աշխարհաբարի մշակման ու բարեկարգման բնագավառում: Հիշյալ երկերը ականառու հետք են թողել ներկա հայ քերականագիտության մեջ՝ քննադատաբար օգտագործվելով մեր անվանի լեզվաբանների կողմից:

Հարկ է հիշեցնել, որ Մխիթարյանների քերականագիտությունը չի սպառվում հիշյալ հեղինակների երկերով: Նրանք կազմել ու հրատարակել են նաև ուրիշ քերականական աշխատություններ, որոնցից մի քանիսը օտար լեզուների ձևաբանությանն ու շարահյուսությանն են վերաբերում³:

¹ Դուռն բերականության աշխարհաբար լեզուին հայոց... Աշխատասիրությամբ տեաոն Մխիթարայ վարդապետի Սեբաստացույ Արրահայր կոչեցելոյ... յամի տեաոն 1727... ի Վենետիկ:

² Քերականութիւն հայկաղեան լեզուի, յօրինեալ ի հ. Միքայէլ վարդապետէ Չամչեանց... Վենետիկ, 1779: Քերականութիւն հայկական, համառօտ կարդեալ... Գարրիէլի Աւետիքեան... Վէնէտիկ, 1823: Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց..., ի հ. Արսէնէ Կոմիտասայ Բագրատունույ, Վենետիկ, 1852:

³ Գրացուցակ Մխիթարյան տպարանին (1717—1960), Վենետիկ, 1960, էջ 71—73: Տեղի սղության պատճառով զանց ենք առնում տողատակ նշել քննարկվող բոլոր հրատարակությունները: Ընթերցողը նշված դրացուցակում ու մատենագիտական արդեն լույս տեսած երկերում դրանց և Մխիթարյանների մյուս բոլոր երկերի մասին կդտնի մատենագիտական լայն տեղեկություններ:

Բառարանագրությունը վենետիկյան Մխիթարյանների գիտական գործունեության թերևս ամենալիարժեք օղակն է։ Գիտահետազոտական շատ մեծ աշխատանք ու հմտություն են ներդրել նրանք այս մեծ գործում, հրապարակ հանելով մասնավորապես «Հայկազեան» բառարանը⁴, որը ոչ միայն հայկական, այլև համաշխարհային բառարանագրության լեզվի երևույթներից մեկն է։ Հիշյալ աշխատությունը գլուխ բերելու համար Մ. Սեբաստացին և իր օգնականները հարկադրված են եղել պեղել մեր ողջ մատենագրությունը, տպագիր և զրչագիր անհամար մատյանները, փաստադրերը, հնարավորին չափ քաղվածքներ անել ժամանակակից խոսակցական լեզվից, համեմատել և ճշգրտել են ամեն մի բառի այս կամ այն իմաստային կիրառությունը զարերը ընթացքում։ Նրանք չեն զոհացել բառի միայն ամենաճշգրիտ իմաստը նշելով, այլև բերել են բաղմամբիվ նմուշներ՝ բնորոշ բառակապակցությունների մեջ, որպեսզի ընթերցողին մատչելի լինեն նրա իմաստային ու կիրառական տարբեր երանգները և դարավոր պատմությունը։ Սա գիտական շատ կարևոր առավելություն և նորություն էր տվյալ բնագավառում։

Մ. Սեբաստացու բառարանը, հարկավ, ունի թերություններ, որոնք պայմանավորված են մի շարք օբյեկտիվ պատճառներով և ժամանակի գիտական մտքի զարգացման աստիճանով։ Նրանք նկատվում են դեռևս Մ. Սեբաստացու սաների կողմից, որոնք ձեռնարկում են մի նոր բառարան («Նոր բառգիրք Հայկազեան լեզուի») կազմելու և հրատարակելու գործը։ Մի անգամ ևս ամենայն բժախնդրությամբ պեղվում են ողջ հայ մատենագրությունը, Մ. Սեբաստացուն և գործակիցներին անհայտ սկզբնաղբյուրներն ու զրչագրերը։ Նոր բառարանում կատարվում են բաղմամբիվ լրացումներ. զգալի չափով աճում է բառակազմը, առավել ճշգրտությամբ տարրերաբանվում են համանուն և հոմանիշ բառերը, նրանց իմաստները, բերվում են բառակապակցությունների նոր ու բաղմամբան նմուշներ, կատարելագործվում է գիտա-տեխնիկական կոզմը։ Նոր բառարանը, բարձրանալով նախորդի ընդհանուր հիմքի ու փորձի վրա, բոլորովին էլ նրա կրկնությունը չէ, այլ իր հարստացված բառակազմով ու ղյուրամատչելի գործնականությամբ նշանակալից ևրևույթ է հայ բառարանագրության մեջ⁵։ Արժեքավոր ներդրում է նաև Մ. Ավգերյանի «Առձեռն» բառարանը⁶։

Մեծ է Մխիթարյանների երախտիքը հայերեն-օտար լեզուների բառարաններ կազմելու գործում։ Հայոց և օտար լեզուների խոր իմացությունը լայն հնարավորություն է ընձեռել նրանց այդ խնդրում։ Մ. Ջախջախյանի հայերեն-իտալերեն, Հ. Ավգերյանի ֆրանսերեն-հայերեն, հայերեն-ֆրանսերեն, անգլերեն-հայերեն, հայերեն-անգլերեն, գերմաներեն-հայերեն, հունարեն-հայերեն (վերջին երկուսը, ինչքան մեղ հայտնի է, դեռևս անտիպ են) և այլոց այս կարգի բառարանները⁷ շատ են սատարել հայագիտությունն ու հայ ժողովրդին եվրոպական գիտությանն ու մշակույթին մերձեցնելու գործին։

⁴ Բառգիրք Հայկազեան լեզուի... արարեալ ի Մխիթարայ վարդապետէ Սեբաստացոյ Արաշայր կոչեցելոյ, աշխատակցութեամբ աշակերտաց իւրոց, հատ. Ա, Վենետիկ, 1749, հատ. Բ, Վենետիկ, 1769։

⁵ Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, երկասիրութիւն երից վարդապետաց... հ. Գարրիէի Աւետիքեան, հ. Խաչատրոյ Սիրմէլեան, հ. Մկրտի Աւգերեան, հատ. առաջին, Ա—Կ, Վենետիկ, 1836, հատ. երկրորդ, Հ—Ֆ, Վենետիկ, 1837։

⁶ Մ. Ավգերյան, Առձեռն բառարան Հայկազեան լեզուի, Վենետիկ, 1846։

⁷ Գ. Ջախջախյան, Հայկական մատենագիտություն, Վենետիկ, 1883, էջ 90—97։

Կարևոր իրադարձություն էին նաև Մ. Քաջունու «Բառգիրք արուեստից եւ գիտութեանց», Մ. Մաղաք-Թեոփիլյանցի «Ի վարուց երևելի արանց», Մ. Բժշկյանի «Նկարագիր վարուց երևելի արանց», Ի. Խաչատուրյանի «Բառգիրք յատուկ անուանց արտաքոյ սուրբ Գրոց՝ եղելոց ի գիրս հայոց», Զ. Ալեքսանյանի «Բառգիրք յատուկ անուանց Աստուածաշունչ գրոց», Ս. Երեմյանի «Բառգիրք գործնական գիտութեանց», Մ. Պոստուրյանի «Հայ Հանրագիտակ» բառարանները⁸, որոնք նույնպէս բերել ու բերում են իրենց կարևոր նպաստը աղղային և համաշխարհային գիտութեան, արվեստի և մշակույթի նվաճումները հայ ժողովրդին ներկայացնելու խնդրում:

Քերականագիտական ու բառարանագրական աշխատանքներից բացի, որոնք վերաբերում են և՛ գրաբար, և՛ աշխարհաբար հայերենին, Մխիթարյանները կազմել ու հրատարակել են դասագրքեր⁹: Դպրոցական բավական լայն ցանց ունենալով, նրանք գործնական ուսուցմամբ նշանակալից դեր են կատարել դասագրքերի մշակման գործում:

Գրաբարի և աշխարհաբարի հայտնի պրոբլեմը լուրջ մտահոգությունների և գործարար քննարկումների կարևոր հարց է հանդիսացել նաև Մխիթարյանների համար: Քաջ հայտնի է նրանց հիմնական դիրքավորումը այս կապակցությամբ. մշտապես նախապատվությունը վերապահելով դասական գրաբարին, մեծ դժվարությամբ ու ամսոսանքով են հաշտվել նրա աւապարեղից իսպառ հեռանալու անխուսափելի իրողության հետ: Նրանց այդ դիրքը բացատրելի ու հասկանալի է: Սակայն անպայման հարկ է տեսնել ու նշել, որ նրանք թեև տեսական դրականության մեջ հիմնականում «գրաբարյանական» են եղել, բայց գործնականում ժողովրդին հասկանալի լինելու սկզբունքն են կիրառել հնարավոր առավելագույն չափով և գործնական եռանդուն աշխատանք կատարել աշխարհաբարը առավել կենսունակ, կարող, հարուստ ու ճշգրիտ դարձնելու համար: Մ. Սերաստացու հայագիտական գործունեության առաջին քայլը եղել է աշխարհաբարի քերականությունը: Մխիթարյանները առաջիններից էին, որ աշխարհաբարի գրավոր կիրառություն սկսեցին: Աշխարհաբար առաջին թերթերը, ինչպես կտեսնենք ստորև, Մխիթարյաններն են լույս ընծայել դեռևս XIX դարի առաջին տասնամյակներին: Քաջ հայտնի է մեծանուն Ղ. Ալիշանի երախտիքն ու դերը աշխարհաբար լեզուն զեղարվեստական դրականության լեզու դարձնելու շնորհակալ գործում: Այս տեսանկյունից նվազ գնահատելի չեն նաև մյուս Մխիթարյանների աշխարհաբար սեփական ստեղծագործություններն ու թարգմանաբար հրատարակած երկերը: Հայտնի է, որ Մխիթարյանների ոչ կրոնավոր սաները (Մ. Պեշիկթաշլյան, Թ. Թեոդյան և ուրիշներ) կարևոր նպաստ են բերել այս բնագավառում:

Մխիթարյանների կրթական-մանկավարժական գործունեությունը մշակութային-լուսավորական որոշակի դեր է կատարել հատկապես արևմտահայ և գաղութահայ իրականության մեջ: Բացի երբեմնի Մուրադյան և Ռաֆայելյան, ապա Մուրադ-Ռաֆայելյան վարժարաններից, Մխիթարյանները դպրոցներ են հիմնում Արևմտյան Հայաստանում, Թուրքիայում, Տրանսիլվանիայում, Սիրիայում և Եգիպտոսում: Նրանց աճեցրած սաներից են Մ. Պեշիկթաշլյանը, Թ.

⁸ Տե՛ս նշվ. Գրացուցակը, էջ 62, նաև «Մխիթարյան հոբելյան (1701—1901)», Վենետիկ, 1901 («Բաղմավեպի» բացառիկը), էջ 217:

⁹ Նշվ. Գրացուցակը, էջ 61—73:

Թերղյանը, Մ. Մամուրյանը, Ս. Հերիմյանը, Ծերենցը, Բ. Վարուժանը, Ա. Արփիարյանը, Վ. Փափաղյանը և ուրիշներ, որոնք հայ գրականության ու մշակույթի անվանի մշակներն են դարձել:

Ծակայն հայ ժողովրդի լուսավորությանն ու մտավոր զարգացմանը նաև գործնականորեն սատարելու համար Մխիթարյանները չեն գոհանում միայն կրթական-մանկավարժական գործունեությամբ: Նրանք փորձում են հայ ընթերցողին հասցնել ժամանակակից գիտության բոլոր նորություններն ու նվաճումները: Առանձին ուսումնասիրությունների և իրենց մամուլի մեջ բաղմամբով էջեր են նվիրում բնագիտական, քիմիական, երկրաբանական, բուսաբանական, մաթեմատիկական, բժշկագիտական, աստղաբանական, մեքենագիտական և բնական այլ գիտությունների կարևոր խնդիրներին¹⁰: Բարձր զնահատելով «փորձառական գիտությունները», ամեն կերպ ջանացել են դրանք կիրառության դնել զանազան գործառնությունների ու կենցաղի մեջ: Այս միևնույն մետահոգությունն է շարժառիթ հանդիսացել նրանց համար, որպեսզի մասնավոր ուսումնասիրություններ նվիրեն ոչ միայն երկրագործությանը, շերամապահությանը, մեղվաբուծությանը, այգեգործությանը, անասնաբուծությանը, թռչնաբուծությանը, այլև ֆիզիկային, քիմիային, մեքենագիտությանը, ճարտարարվեստին և այլն¹¹: Հարկ է նշել, որ նրանք շարունակաբար նորոգել են այս բնագավառի իրենց հետազոտությունները գիտության ներագույն նվաճումների համեմատ և ըստ այդմ էլ հանդես եկել նորանոր հրատարակություններով: Մխիթարյան միաբան Մ. Աղաշրաղյանը բնական գիտությունների վերաբերյալ ոչ միայն գրքեր է հեղինակել, այլև Կ. Պոլսում լաբորատորիաներ է հիմնել, կազմել է հանքանյութերի հավաքածուներ: Նա միաժամանակ գյուտարար էր, իսկ նրա գիտական փորձերը զնահատվել են եվրոպական գիտնականների կողմից: Նա զանազան պատվավոր տիտղոսների և շքանշանների է արժանացել մի քանի պետությունների կողմից:

Նշանավոր դեմքեր են նաև Մ. Քաջունին, Վ. Հովսեփյանը, Ս. Գուրգենյանը, Հ. Բաբիկյանը, Ս. Նրեմյանը և ուրիշներ, որոնք նախնապես հանդես են եկել այս բնագավառի կարևոր աշխատություններով: Դարվինիզմի վերաբերյալ ուշադրավ մենագրություն է հրատարակել Ս. Նրեմյանը¹²: Հայաստանի բուսականությամբ, կենդանիներով և հանքային հարստություններով հետաքրքրվողը շատ օգտակար նյութ կգտնի նրանց համապատասխան ուսումնասիրությունների մեջ: Մխիթարյանների պարբերական մամուլը, որի մասին խոսք կլինի ստորև, նույնպես շատ առատ նյութ է բովանդակում վերոհիշյալ գիտությունների կարևոր նորությունների և նվաճումների մասին:

Ոչ նվազ արդյունավետ և օգտակար գործ են կատարել նաև Մխիթարյան աշխարհագիրները: Նրանց տեսադաշտում ոչ միայն Հայաստանն է, այլև երկրագնդի բոլոր ցամաքամասերը: Ազոնցի «Աշխարհագրութիւնը» (որի առաջին հատորը շարագրել է Ղ. Ինճիճյանը) իր ժամանակի աշխարհագրության կարևոր նվաճումներից մեկն է: Այնտեղ գրեթե բոլոր երկրների մասին հանգամանորեն պատմվում է այն ամենը, ինչը առ այդ հայտնի էր գիտական աշխարհին¹³:

¹⁰ Տե՛ս նշվ. Գրացուցակը, էջ 62—82:

¹¹ Տե՛ս նշվ. Գրացուցակը, էջ 62—82:

¹² Նույն տեղում, էջ 89:

¹³ Ս. Ազոնց, Աշխարհագրութիւն շորից մասանց աշխարհի, հատ. Ա—ԺԱ, Վենետիկ, 1802—1806:

Հարուստ և արժեքավոր է նաև Ղ. Ալիշանի «Քաղաքական աշխարհագրութիւն» ձեռնարկը¹⁴։ «Աշխարհագրություն քաղաքական, ուսումնական և բնական» գործի մեջ Ս. Յաղչյանը և «Տարերք աշխարհագրության» գրքի մեջ Գ. Ստեփանյանը վերստին տալիս են մայր ցամաքների աշխարհագրությունը՝ ավելի սիստեմավորված, լրացված նոր տեղեկություններով և գիտա-տեսական դիտողություններով¹⁵։

Սակայն այս բնագավառում Մխիթարյանների մեծագույն ներդրումը եղել ու մնում են Հայաստանի պատմա-քաղաքական, տնտեսական ու ֆիզիկական աշխարհագրության և աղագրության վերաբերյալ բազմաթիվ մեծ ու փոքր աշխատություններն ու հոդվածները։ Այս կապակցությամբ նախապատվությունը, անտարակույս, պետք է տալ Ղ. Բնճիճյանին։ Ս. Ազոնցի վերոհիշյալ աշխատության առաջին ընդարձակ հատորում նա ամենայն մանրամասնությամբ ներկայացնում է պատմական Հայաստանը՝ տվյալ ժամանակի դրությամբ¹⁶։ Սույն աշխատությունը փաստական նյութի (հնարավոր վրիպումներով հանդերձ) հարուստ շտեմարան է և, անկասկած, ունի պատմա-աշխարհագրական կարևոր արժեք։ Հայաստանի և նրա աշխարհագրության վերաբերյալ իր մյուս հանրահայտ աշխատություններում¹⁷ նա նաև խոսում է կարևոր պատմա-քաղաքական անցուղարձերի, Հայաստանի վարչաձևերի, նախարարական տների, նրանց իրավական դրության, հայ ժողովրդի բարքերի ու սովորությունների, զբաղմունքի, հավատալիքների և այն ամեն հատկանշականի մասին, որն առնչվում է Հայաստանին և նրա բնակչությանը։

Մեծ է նաև Ղ. Ալիշանի նպաստը այս խնդրում։ «Բնախոսություն Հայաստանի», «Տեղադիր Հայոց Մեծաց» և «Նշմարք հայկականք»¹⁸ երկերից բացի, պատմա-աշխարհագրական խոշոր ներդրում են նրա «Սիսվան», «Շիրակ», «Այրարատ», «Սիսական» ստվար հատորները¹⁹։ Մեծաջան հետազոտական աշխատանքի և խոր հմտության շնորհիվ հեղինակը կազմել է համանուն զավառների մանրամասն տեղագրությունը, խոսել է նրանց բուսական ու կենդանական աշխարհի մասին, նշել կարևոր վարչական, կրոնական, մշակութային կենտրոնները, իր հիմնական գծերով ներկայացրել Հայաստանի քաղաքական պատմությունը։

Տեղագրական հետաքրքիր աշխատություն է նաև Ն. Սարգիսյանի «Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս» ուղեգրական երկը²⁰։ Այստեղ, բացի աշխարհագրական տեղեկություններից, արժեքավոր է վիճաբար արձանագրությունների բավական մեծ հավաքածուն։ Հայաստանի աշխարհագրությանն են վերաբերում նաև Մ. Քաջունու մի քանի աշխատությունները, որոնք որպես ուսում-

¹⁴ Քաղաքական աշխարհագրութիւն, նկարացոյց պատկերօք... հաւաքեաց հ. Ղևոնդ Ալիշանեան, Վենետիկ, 1853։

¹⁵ Ս. Յաղչյան, Աշխարհագրութիւն քաղաքական, ուսումնական և բնական, Վենետիկ, 1885։ Գ. Ստեփանյան, Տարերք աշխարհագրութեան, Վենետիկ, 1900։

¹⁶ Տե՛ս Ս. Ազոնց, նշվ. աշխ., հատ. Ա, Վենետիկ, 1802։

¹⁷ Ստորագրութիւն Հայաստանեայց... հ. Ղուկաս վարդապետի Ինճիճեան, Վենետիկ, 1822, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի... հ. Ղուկաս Աթոռակալ վարդապետի Ինճիճեան, հատ. Ա, Բ, Գ, Վենետիկ, 1835։

¹⁸ Գ. Ջարրհանալյան, նշվ. աշխ., էջ 115, 663, 300։

¹⁹ Հայկական նոր մատենագիտություն և հանրագիտարան հայ կյանքի. կազմեց հ. Արսեն Ղազարոս Ղազիկյան, հատ. առաջին, Ա—Մ, Վենետիկ, 1909—1912, էջ 38—58։

²⁰ Ն. Սարգիսյան, նշվ. աշխ., Վենետիկ, 1864։

նական ձեռնարկ շատ օգտակար են եղել²¹։ Այս բնագավառի ամենաարժեքավոր ուսումնասիրություններից է Ս. էփրիկյանի հանրահայտ «Պատկերադարդ բնաշխարհիկ բառարանը»²²։ Հայաստանի վերաբերյալ տեղագրական բնույթի բաղմաթիվ հոդվածներ լույս են տեսել «Բաղմավեսություն», վերոհիշյալ աշխատություններից մի քանիսը նախապես տպագրվել են այնտեղ։

Մխիթարյանները հրատարակել են նաև հայերեն աշխարհագրական բնագրեր։ Ա. Սուքրյանը լույս է բնծայել VII դարի «Աշխարհացոյցը»՝ ֆրանսերեն թարգմանությամբ հանդերձ²³։ Թեև հրատարակիչը իրավացի չէ, երբ հիշյալ աշխատությունը համարում է Պտղոմեոսի «Աշխարհագրության» համառոտագրությունը, բայց նրա թարգմանությունը և հրատարակությունը ինքնին արժեքավոր ձեռնարկում է։

Քարտեզագրությունը նույնպես Մխիթարյանների գործունեության կարևոր օղակներից է։ Ծիշտ է, դեռևս 1665 թ. Ամստերդամում հրատարակված «Համատարած Աշխարհացոյցը» մինչև այսօր էլ աշխարհագետներին հիացնում է, բայց հսկայաքարտեզագրությունը իր հաջողություններով պարտական է վենետիկյան (նաև՝ Վիեննայի²⁴) Մխիթարյաններին։ Նրանք հարյուրավոր քարտեզներ են հրատարակել՝ դանազան մասշտաբի ու բնույթի։ Դրանցից մի քանիսը մրցանակների են արժանացել Փարիզի, Լոնդոնի, Ամստերդամի, Բեռլինի ցուցահանդեսներում²⁵։

Շատ մեծ ընդդրկում ունի Մխիթարյանների թարգմանչական գործունեությունը։ Նրանք իրենց տեսադաշտում ունեցել են համաշխարհային գրականության ու գիտության խոշորագույն ներկայացուցիչների երկերը։ XVIII—XIX դարերի հայ թարգմանական գրականության առավելագույն բաժինը նրանց աշխատանքի արգասիքն է։ Եթե միայն թվարկելու լինենք թարգմանված երկերի անունները, չենք կարող չպատկառել նրանց հսկայական աշխատանքից։ Նշենք դրանցից միայն մի քանիսը։ Օրինաչափ երկույթ է, իհարկե, որ կրոնա-եկեղեցական երկերից հետո Մխիթարյանները սկսում են թարգմանել անտիկ աշխարհի գրական կոթողները։ Հոմերոսի երկու աշխարհահռչակ պոեմներն էլ նրանց կողմից թարգմանվել են մի քանի անգամ։ Ե. Թոմաճյանը (երբեմն՝ Թոմաճան) կատարում է «Իլիականի» առաջին թարգմանությունը 1843 թ., Ա. Բագրատունին՝ երկրորդը 1864 թ., իսկ երրորդը՝ Ա. Ղազիկյանը 1911 թ.։ Առաջին երկուսը գրաբար են (ի դեպ, Մխիթարյանների թարգմանությունների մեծագույն մասը գրաբար է), իսկ վերջինը՝ աշխարհաբար²⁶։ «Ողիսականը»

21 Հնախօսություն Հայաստանի ի պէտս դպրոցաց, ի հ. Մանվել է Մխիթարեան վարդապետէ Քաջունոյ, Վենետիկ, 1855։ Աշխարհագրութիւն հին և նոր Հայաստանեաց... հ. Մանուէլ վարդապետ Քաջունի, Վենետիկ, 1857։

22 Պատկերադարդ բնաշխարհիկ բառարան, աշխատասիրեց հ. Ս. էփրիկյան, հատ. Ա, Ա—Ը, Վենետիկ, 1902, հատ. Բ, Թ—Կ, 1907։

23 Ա. Սուքրյան, Աշխարհացոյց Մովսեսի Խորենացոյ..., Վենետիկ, 1881։

24 Մենք սույն հոդվածում, հասկանալի պատճառով, ընդհանրապես չենք խոսում Վիեննայի Մխիթարյան միաբանության գործունեության մասին։

25 Զ. Խանզադյան, Հայաստանի աշխարհագրությունը Մխիթարյանց գրականության մեջ, «Գեղունի», 1950, էջ 210։

26 Հոմերոսի Եղիական, թարգմանեաց ի հելլենականէ հ. Եղիա վ. Թոմաճեան... Վենետիկ, 1843։ Հոմերի Իլիական, հան ի հայ հ. Արսէն Կ. Բագրատունի, Վենետիկ, 1864։ Հոմերի Իլիական, ռնադրեն (աշխարհաբար) թարգմանեց հ. Արսեն Ղազարոս Ղազիկյան, Վենետիկ, 1911։

ունի երկու թարգմանություն, առաջինը՝ 1848 թ., Ե. Թումաճյանի և երկրորդը՝ 1924 թ., Ա. Ղազիկյանի²⁷:

Հուլյն ողբերգականներից Սոֆոկլեսի և Եվրիպիդեսի ողբերգությունների թարգմանությամբ հանդես են գալիս Ա. Բազրատունին, Ա. Սուքրյանը, Ա. Ղազիկյանը²⁸: Եղովոսի առակները թարգմանվում են Մ. Բժշկյանի կողմից դեռևս 1818 թ. (հրատարակվել է մի քանի անգամ)²⁹: Հունական փիլիսոփաներից թարգմանվում են Պլատոնի, Թեոկրատեսի, պատմադիրներից՝ Թուկիդիդեսի, Պլուտարքոսի, ճարտասաններից՝ Հսքինեսի ու Դեմոսթենեսի երկերը³⁰:

Հռոմեական գրականության ամենակարկառուն դեմքերից Վիրգիլիոսի երկերը ևս եղել են Մխիթարյան թարգմանիչների ուշադրության կենտրոնում: Նրա «էնեականը» առաջին անգամ թարգմանվել է 1845 թ. է. Հյուրմյուղյանի կողմից: Երկրորդ անգամ դարձյալ միևնույն թարգմանիչն է այն «հայկական շափով» թարգմանում, իսկ աշխարհաբար թարգմանությունը կատարում է Ա. Ղազիկյանը: «Հովվականքը» (Բուկոլիկա) ևս հիշյալ երկու թարգմանիչներն են թարգմանում: «Մշակականքը» (Գեորգիկա) և Հորատիոսի «Ars poetica»-ն, որը Բուալոյի համանուն երկի հետ կլասիցիզմի մանիֆեստն էր հանդիսանում, առաջին անգամ թարգմանվում է Ա. Բազրատունու, իսկ երկրորդ անգամ՝ Ա. Ղազիկյանի կողմից³¹: Թարգմանվում են նաև Կիկերոնի, Հուլիոս Կեսարի, Սալուստիոսի, Մարկոս Ավրելիոսի, Սենեկայի, Ֆեդրայի, Տակիտոսի և այլոց առավել հռչակավոր երկերը³²: Իտալացի մեծանուն բանաստեղծ Դանթեի «Աստվածային կատակերգությունը» նախապես հատվածաբար թարգմանվում է Դ. Նազարեթյանի, ապա ամբողջական՝ Ա. Ղազիկյանի կողմից: Ա. Տիրոյանը ևս 1930 թ. թարգմանում է «Արքայություն» մասը³³:

Եվրոպական կլասիցիզմի և ռոմանտիզմի ներկայացուցիչներից Ռասինի, Կոռնելի, Վոլտերի, Ալֆիերիի, Տասսոյի, Ֆենելոնի, Միլտոնի, Լամարթինի, Բայրոնի, Շիլլերի, Գոլդսմիտի, Տենիսոնի, Լեոպարդիի, Ջիագոզայի, Գեսների, Դոպեի, Ֆոսկոլոյի, Սենկևիչի և մի քանի այլ հեղինակների ընտիր երկերի զգրաբար և աշխարհաբար թարգմանությամբ հանդես են գալիս մխիթարյան թարգմանիչներից շատերը³⁴: Շեքսպիրի «Հենրի VIII» (թերի) և «Մակբեթ» ողբերգությունները թարգմանվում են Տ. Կասկանդիլյանի կողմից և հրապարակվում «Բազմավեպի» մեջ³⁵: Բիչեր Ստոուի «Քեռի Թովմասի տնակը» Գ. Սեմերայանը թարգմանում և հրատարակում է դեռևս 1854 թ.³⁶ Ք. Քուչնարյանը

27. Հոմերոսի Ոդիսական, թարգմանեաց ի հելլենականէ հ. Եղիա վ. Թումաճեան..., Վենետիկ, 1848: Նույնը հ. Արսեն Ղազիկյանի թարգմանությամբ, Վենետիկ, 1924:

28. Ժաշակ հին և նոր ողբերգութեանց... ի հելլենաց եւ յարգեաց, թարգմանեալք յիւրաքանչիւր բնագրացն ի ձեռն հ. Արսէնի Կոմիտասայ Բազրատունույ, Վենետիկ, 1869: Եւրիպիդէս. Աղերսաւորք, զոր ի հելլէն բնագրէ փոխեաց ի մերս հ. Արսէն Սուքրի, Վենետիկ, 1871: Սոֆոկլէս, Իդիպոս թագավոր (աշխարհաբար, թարգմ. հ. Ա. Ղազիկյանի), Վենետիկ, 1928:

29 Առակք Եղովպոսի, թարգմանյալ աշխարհաբար լեզու... հ. Մինաս վարդապետ Բժըշկյան, Վենետիկ, 1818:

30 Գրացուցակ Մխիթարյան տպարանի, էջ 57, 58, 52—53, 55, 60:

31 Նույն տեղում, էջ 51, 52, 55, 56:

32 Նշվ. Գրացուցակը, էջ 55, 56, 58, 53, 50, 51, 60:

33 Նույն տեղում, էջ 54, 50:

34 Նույն տեղում, էջ 36—60:

35 Դաւղմավեպ, 1877, էջ 124, 339, 1878, էջ 69, 174, 273, 325:

36 Նշվ. Գրացուցակը, էջ 37:

թարգմանություններ է կատարում Պուշկինի, Կոիլովի, Նեկրասովի, Շեքսպիրի երկերից³⁷։ Մխիթարյանները թարգմանում են նաև դիտական, պատմական, աշխարհագրական և արվեստագիտական մի շարք այլ երկեր։

Անհրաժեշտ է նշել, որ նրանք հսկայական աշխատանք են կատարում միաժամանակ հայ մատենագրությունը օտարներին թարգմանաբար ծանոթացնելու գործում։ Իտալերեն թարգմանվում են Ազոթանգելոսի ու Մովսես Խորենացու Պատմությունները, Գ. Նարեկացու Աստվածածինն ընկրկած ներբողը, Համբրոնացու «Ատենաբանութիւնը», Ֆրանսերեն՝ Եղիշեի ու Փարսեցու երկերը, Շնորհալու «Ողբ Եղեսիո» պեմը, լատիներեն՝ «Աշխարհացոյցը», հայկական շարականներ, Հովհան Օձնեցու ճառերը։ Այս բոլորից բացի նրանք հայերենից լատիներենի էն թարգմանում նաև մի քանի այլ աշխատություններ, որոնք երբայերեն կամ հունարեն բնագրերից վաղուց էին թարգմանվել հայերենի և որոնց սկզբնաղբ բնագրերը կորել և միայն հայերեն թարգմանություններն էին մնացել։ Դրանցից են Եվսեբիոս Կեսարացու «Քրոնիկոնը» և Փիլոնի ճառերը, որոնք թարգմանվում են Մ. Ավգերյանի կողմից և հրատարակվում 1818 և 1822 թթ.։

Վերոհիշյալ թարգմանությունների մի մասը, ինչպես և շատ այլ թարգմանական գործեր, նախապես հրատարակվել են «Բաղմավելում»։

Վենետիկյան Մխիթարյանները նվազ երախտիք չունեն հայ պարբերական մամուլի պատմության մեջ։ Այս բնագավառում ևս նրանք առաջիններից են։

Հայերեն առաջին պարբերականի՝ Մադրասի «Ազգարարի» հրատարակությունից միայն հինգ տարի հետո լույս է ընծայվում երկրորդը՝ վենետիկյան Մխիթարյանների «Տարեգրությունը»՝ Դ. Ինձիճյանի խմբագրությամբ։ Այն վկայությունը, թե դա է «հիշատակաբան քաղաքական, պատերազմական, և կեղեցական և բանասիրական անցից և դիպվածոց աշխարհի», ինքնին հաստատումն է այն հիմնական բովանդակություն և ուղղություն, որն ունեցել և որին հետևել է «Տարեգրությունը» 1799—1802 թթ. ընթացքում³⁸։ «Եղանակ Բյուզանդյան, Բաղմավելյան» Մխիթարյանների հաջորդ պարբերականն է, որը սկսել է հրատարակվել 1803 թ. և դադարել 1820 թ.³⁹։ Միաժամանակ 1812 թ. «Արշարունյաց ընկերության» (Կ. Պոլսում կազմակերպված) խնդրանքով Մխիթարյանները հրապարակ են հանում «Դիտակ Բյուզանդյան» պարբերաթերթը, որը «Տարեգրության» հաջադատ երկվորյակն էր⁴⁰։ Ուշագրավ է, որ այս երեք թերթերն էլ աշխարհաբարով էին լույս տեսնում։ Սրանցով նախապատրաստվում էր «Բաղմավելի» երևան գալը, որի առաջին համարը հրատարակվում է 1843 թ. և ապա անընդմեջ լույս ընծայվում առ այսօր⁴¹։ Այն ամենաերկարակյաց հայերեն պարբերականն է և հնագույններից մեկը ամբողջ աշխարհում։ «Բաղմավելի» դիտական, գրական, պատմա-բանասիրական հանդես է։ Այն սկզբնական շրջանում ավելի համեստ ծրագրերի էր հետամտում, հետաքրքիր և օգտակար գիտելիքներ հաղորդում, պրոպագանդում բնական գիտություն-

³⁷ Նույն տեղում, էջ 36։

³⁸ Տե՛ս Գ. Լևոնյան, Հայոց պարբերական մամուլը, Երևան, 1934, ներածություն, էջ 19 և 3։

³⁹ Նույն տեղում, էջ 19, էջ 3։

⁴⁰ Նույն տեղում, էջ 19, էջ 4։

⁴¹ Նույն տեղում, էջ 21, էջ 5։

ները, տնտեսագիտական, առևտրա-արհեստագործական, երկրագործական, բժշկական, աշխարհագրական և այլ օգտակար ակնարկներ հրապարակում։ Աշխարհաբար լեզվի ընտրությունն ու հիմնականում այսպիսի բովանդակությունը պարզ ցույց են տալիս «ուռաջին խմբագիրների (Այվազովսկի, Ալիշան) «լուսավորչալ աղգ» ունենալու ուղղակի տրամադրությունը։ Տարիների ընթացքում պարբերականը աստիճանաբար հասունանում է. հայոց պատմության, հնագիտության, աղագրության, մատենագրության, լեզվի, բանասիրության, ճարտարապետության, երաժշտության, բանահյուսության հարցերի շուրջ «Բազմավեպում» լույս են տեսնում հոդվածներ և հոդվածաշարեր, որոնց գիտական արժեքն ու շահեկանությունը աներկբայնի են։ Նրա տարբեր համարներում կարելի է բաղմիցս հանդիպել Ազաթանդեղոսի, Բյուզանդի, Խորենացու, Եղիշեի, Փարպեցու, Մանդակունու, Օձնեցու, Նարեկացու, Արծրունու, Սարկավադի, Կ. Երզնկացու, Հ. Երզնկացու, Աղթամարցու և մեր մատենագրության շատ ուրիշ հայտնի ու մինչ այդ անհայտ հեղինակների գրական գործունեությունը առնչվող հարցերի պատմա-բանասիրական քննությանը, որն այսօր էլ փաստական ու հետազոտական հարուստ նյութ է տալիս հայազիտությանը։ Այս բնագավառում առավել ուշագրավ հոդվածներ, երբեմն էլ հոդվածաշարեր (որոնք հետադայում լույս են տեսել առանձին հատորներով) ստորագրել են Ղ. Ալիշանը, Հ. Թորոսյանը, Վ. Հացունին, Կ. Սահակյանը, Հ. Աճառյանը, Կ. Բասմաճյանը, Բ. Սարգիսյանը, Հյուբշմանը, Ս. էփրիկյանը, Ք. Չրաքյանը, Ն. Բյուզանդացին, Ն. Անդրիկյանը, Հ. Սանդալյանը, Ն. Պոտուրյանը, Գ. Նահապետյանը, Ե. Փելիկյանը, Գ. Սարգիսյանը, Ս. Երեմյանը, Վ. Հովհաննիսյանը, Հ. Քուրտյանը և ուրիշներ։

Նոր և նորագույն շրջանի հայ գրողների ստեղծագործությունների վերաբերյալ հոդվածները ևս կարևոր տեղ են գրավում «Բազմավեպի» տարբեր համարների մեջ։ Այս մասին առավել նշանակալից են Ս. Երեմյանի, Ք. Չրաքյանի, Ա. Արփիարյանի (Հրպետ), Գ. Բժիկյանի, Մ. Շանաշյանի և մի քանի այլ անվանի գրականագետ-բանասերների «Բազմավեպում» լույս ընծայած հոդվածները։ Այստեղ են տպագրվել Ս. էփրիկյանի, Վ. Հացունու, Գ. Նահապետյանի, Վ. Թորոսյանի, Ն. Չորայանի, Ա. Երեմյանի, Կ. Սահակյանի, Ս. Երեմյանի, Թ. Թերզյանի և այլոց տեղագրական, տնտեսագիտական, աղագրական, հայ բժշկության, ճարտարապետության, թատրոնի, երաժշտության, մանկավարժության, տաղաչափության և այսօրինակ այլ թեմաների վերաբերյալ ուշագրավ հոդվածաշարերը։

Մեծ դեր է խաղացել «Բազմավեպը»՝ հանդես գալով օտար ժողովուրդների գրականության, բանահյուսության, պատմության, մշակույթի, կենցաղի վերաբերյալ առանձին երկերի թարգմանությամբ, ուսումնասիրություններով և հաղորդումներով։

«Բազմավեպը» շատ էջեր է նվիրել հայ ժողովրդի հասարակական-քաղաքական կյանքին, անդրադարձել նրա սոցիալ-տնտեսական դրությանը, աղագային-աղատագրական շարժումների ականավոր ներկայացուցիչների գործունեությանը, Խորհրդային Հայաստանի կյանքին և սփյուռքահայ իրականությանն առնչվող հարցերին։

Միֆթարյանների հայազիտական գործունեության ամենակրախտաշատ բնագավառը, բառարանագրության հետ համատեղ, նրանց պատմա-բանա-

սիրական աշխատանքն է: Այս աստվարեղում նրանց կատարած բոլոր գործերն ընդգրկել մեկ հողվածում անհնար է, ուստի մենք համառոտակի կանդրադառնանք Մխիթարյանների միայն մի քանի առավել ակնառու և արժեքավոր երկասիրություններին:

Առաջին մեծավաստակ երախտավորը այս բնագավառում, անտարակույս, Մ. Զամչյանն է: Նրա երեք հատորանոց «Հայոց պատմութիւնը»⁴² հայ ժողովրդի դարերի պատմա-քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային, գրական, գիտական, կրոնա-եկեղեցական կյանքի առաջին անգամ ամբողջացված (թեպետ և առասպելախառն) պատմությունն է: Նրա հեղինակը միայնակ պեղել է մեր ողջ մատենագրությունը, տպագիր ու ձեռագիր հազարավոր սկզբնաղբյուրներ, զննել, համադրել, իմաստավորել ու գնահատել է տասնյակ հազարավոր փաստեր: Նա մեծ թվով տեղագրական ձշտումներ է արել, ուսումնասիրել նաև բաղմաթիվ օտար սկզբնաղբյուրներ: Բնական է, որ առանց վրիպումների նման մի վիթխարի ստեղծագործություն զուրիս բերել անհնար էր: Զամչյանի գրչին է պատկանում սույն բնագրական աշխատության յուրովի համառոտագրությունը, ավելի շուտ, երկրորդ շարադրանքը, որը «Խրախճան պատմութեան հայոց» անունն է ստացել⁴³:

Պատմագիտական մեծ արժեք են ներկայացնում Ղ. Ալիշանի «Այրարատ», «Սիսվան», «Շիրակ», «Սիսական», «Հայապատում» ծավալուն գործերը, որոնք անխոնջ հետազոտական աշխատանքի, տեղագրական, պատմա-քաղաքական, մատենագիտական, հնագիտական, աղագրական անհամար փաստերի հումահավաքի, վերլուծության ու գնահատության օրինակ են հանդիսանում: Իւրանք թեև կրում են առանձին գավառների անուններ, բայց ընդգրկում են գրեթե ողջ պատմական Հայաստանն ու Կիլիկիան և միաժամանակ համակողմանիորեն լրացնում Մ. Զամչյանի «Հայոց պատմութիւնը»՝ նորահայտ վավերագրերի և պատմական սկզբնաղբյուրների հիման վրա: Հիշյալ երկերը ունեն ձեռագրական վկայությունների, վիճաբանությունների, դանազան փաստագրերի նմասահանություններ, վայրերի և պատմական հուշարձանների բաղմաթիվ նկարագրություններ: Հատկապես աղագրական կարևոր նյութեր է պարունակում նրա «Հին հավատք կամ հեթանոսական կրոնք հայոց» երկը: Իր բնույթով և պատմա-գիտական արժեքով եղակի է «Հայ բուսակը», որտեղ ամենայն մանրամասնությամբ հետազոտված է Հայաստանի բուսականությունը: Ղ. Ալիշանի բնագրագիտական արժեքավոր ներդրումն են «Սոփերք հայկականքի» հատորների, Կ. Բանձակեցու և Վ. Արեւելցու Պատմությունների հրատարակությունները⁴⁴: Բանասիրական հմուտ աշխատանքի արդյունք է նրա «Շնորհալի և սլարագայ իւր» մենագրությունը:

Մխիթարյանների պատմա-բանասիրական գործունեության մեջ են ընդգրկվում նաև Հայաստանի վերաբերյալ պատմական, աշխարհագրական-տեղագրական, հնագիտական և աղագրական բնույթի շատ այլ երկեր, որոնցից մի քանիսի մասին արդեն խոսվեց:

⁴² Պատմութիւն հայոց... յօրինեալ ի հ. Միքայիլ վարդապետէ Զամչեանց, հատ. Ա. Վենետիկ, 1784, հատ. Բ. Վենետիկ, 1785, հատ. Գ. Վենետիկ, 1786:

⁴³ Խրախճան պատմութեան հայոց, յօրինեալ ի հայր Միքայիլ վարդապետէ Զամչեանց... Վենետիկ, 1811 (նույնը նա կազմել և հրատարակել է նաև թուրքերեն, նկատի ունենալով թրքախոս հայերին):

⁴⁴ Սանրամասն տե՛ս Գ. Զարհանալյան, նշվ. աշխ., էջ 626—632:

Մեծ է Մխիթարյանների ավանդը նաև հայ պաղթօջախների, հայ և օտար ժողովուրդների փոխադարձ կապերի պատմության ուսումնասիրության գործում: Այս կապակցությամբ ուշադրության են արժանի առավելապես Մ. Բժըշկյանի, Ղ. Ալիշանի, Բ. Քուլնարյանի, Կ. Սահակյանի և Հ. Ասատուրյանի համապատասխան աշխատությունները: Մխիթարյանները կազմել ու հրատարակել են նաև օտար ժողովուրդների պատմության վերաբերյալ արժեքավոր ուսումնասիրություններ:

Հայ մատենագրության պատմության ուսումնասիրությունը Մխիթարյանների նշանակալից ծառայություններից է: Ինչքան մեծ հայտնի է, հայ գրականության առաջին պատմությունը կազմել և հրատարակել է մխիթարյան Ս. Սոմալյանը 1829 թ. իտալեոեն⁴⁵: Այս հարցում ակնհայտ է անվանի գրականագետ Գ. Զարբհանալյանի վառտակը: Նա կարողացավ շարադրել հայ մատենագրության առավել կանոնավոր և ամբողջական պատմությունը: Քանի՜ ձեռագիր մատյաններ, վավերագրեր, տպագիր սկզբնաղբյուրներ և ուսումնասիրություններ է քննության առել նա: Բանասիրական ու գրականագիտական խոր հմտության շնորհիվ միայն կարող էին ճշտվել ու բացահայտվել բազմաթիվ հեղինակների ժամանակադրությունը, նրանց երկերի հեղինակային, ժանրային պատկանելությունը, գաղափարական և գեղարվեստական առանձնահատկությունները: Գ. Զարբհանալյանն է հայ գրականության մեջ առաջին անգամ շարադրում հունա-հռոմեական, հին և միջին դարերի գրականության հայկական հին թարգմանությունների պատմությունը, հայկական մատենագիտությունը, հայ տպագրության պատմությունը, որոնցից յուրաքանչյուրը ինքնին մի լուրջ ուսումնասիրություն է⁴⁶:

Այս բնագավառում բազմակողմանի աշխատանք է տանում նաև Վ. Հացունին: Նա ոչ միայն ուսումնասիրում է հայ մատենագրության առանձին հուշարձանները, այլև մշակութային և ազգագրական այնպիսի բնագավառներ, ինչպիսիք են ուսումնական ու դաստիարակչական գործը, գրչագրությունը հին Հայաստանում, հայկական ծեսերը, երգումը, դրոշները, տարադը, հայ կինը հայոց պատմության մեջ և այլն: Նրա երկերը դարձյալ աչքի են ընկնում փաստական նյութի հարստությամբ⁴⁷:

Բ. Սարգիսյանի՝ Ազաթանգեղոսի Պատմությանը, Մ. Խորենացու Պատմության աղբյուրներին, Հին կտակարանի անվավեր գրքերին, Հ. Մանդակունու Ճառերին, Անանունի Ժամանակագրությանը, Անանիա թարգմանչի ու Վ. Անեցու երկերին և այլ բազմաթիվ հայագիտական թեմաներին նվիրված ուսումնասիրություններն ու հոդվածները լուրջ ներդրում են հայագիտության մեջ: Սակայն նրա վաստակի առավել արժեքավոր բաժինը Վենետիկի Մխիթարյանների Մատենադարանի ձեռագրերի երկհատոր ստվար ցուցակն է⁴⁸:

Մ. Պոտուրյանը իր գրականագիտական ու բանասիրական հմտության շնորհիվ հայ միջնադարյան տաղերգության ուսումնասիրության գործին որո-

⁴⁵ S. Somalian, Quadro della storia letteraria d'Armenia, Venezia, 1929.

⁴⁶ Մանրամասն տե՛ս Լ. Ղադիկյան, Հայկական նոր մատենագիտություն, էջ 631—651:

⁴⁷ Նույն տեղում, էջ 1537—1540:

⁴⁸ Բ. Սարգիսյան, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանի Մխիթարյանսի Վենետիկ, հատ. Ա, Վենետիկ, 1914, հատ. Բ, Վենետիկ, 1924:

շակի ծառայություններ է մատուցել: Բաղմաթիվ են նրա առանձին երկերն ու մանավանդ հոդվածները: Ուշագրավ գործ է նաև նրա «Հայ հանրագիտակը»⁴⁹:

Զի կարելի այստեղ չնշել Ա. Ղազիկյանի «Հայկական նոր մատենագիտություն» աշխատությունը, որը, ցավոք, մնացել է անավարտ⁵⁰:

Մխիթարյանների գրական-քննադատական տեսադաշտում ընդգրկված է ողջ հայ գրականությունը, սկզբից մինչև մեր օրերը: Նոր և նորագույն շրջանի պատմության վերաբերյալ աշխատություններից հարկ է նշել հատկապես Ս. Երեմյանի, Մ. Ճանաշյանի, Կ. Քիպարյանի, Ք. Չրաքյանի ծավալուն ուսումնասիրությունները⁵¹: Գրականության տեսական հարցերը ևս հուղել են Մխիթարյաններին: Այս կապակցությամբ ուշագրության արժանի են հատկապես Խ. էրզրումցու, Ս. Ազոնցի, Ե. Սեթյանի, է. Հյուրմյուզյանի և Պ. Մինասյանի գործերը⁵²:

Հայաստանի դիցաբանության, բանահյուսության, ճարտարապետության, բեռնագրերի, դրամագիտության, չափի ու կշռի մասնակի և ընդհանուր մի շարք խնդիրների վերաբերյալ կարևոր ուսումնասիրություններով հանդես են եկել Հ. Ավգերյանը, Գ. Նահապետյանը, Ս. Ճեահիրճյանը, Կ. Բասմաճյանը, Ս. Ճուլուրտյանը, Մ. Պոտուրյանը և ուրիշներ⁵³: 1967 թ. մի քանի լեզուներով հրատարակված «Հայկական մանրանկարչություն» ալբոմը նաև հայագիտական արժեքավոր ներդրում է համաշխարհային արվեստի գանձարանը⁵⁴:

Կարևոր է Մխիթարյանների դերը նաև եվրոպացի շատ գիտնականների հայագիտության ծավալման և զարգացման գործին մասնակից դարձնելու բնագավառում:

Հայ գեղարվեստական գրականության մշակման ու զարգացման գործում նույնպես գնահատության են արժանի մխիթարյան հեղինակները: Հայ նոր գրականության երկու գլխավոր ուղղությունների՝ կլասիցիզմի և ռոմանտիզմի պատմությունը սերտորեն առնչվում է Մխիթարյանների գործունեությանը: Դրանցից առաջինը ստեղծվում ու զարգանում է առավելապես մխիթարյան հեղինակների ստեղծագործություններով՝ մասնավորապես եվրոպական կլասիցիզմի անմիջական ներգործությամբ: Այս կապակցությամբ առաջին հերթին հիշատակելի են Ղ. Ինճիճյանի, Գ. Ավետիքյանի, Մ. Զախջախյանի, Ե. Թոմաճյանի, է. Հյուրմյուզյանի անունները: Ա. Բաղրատունին՝ կլասիցիզմի խոշորագույն ներկայացուցիչը հայ գրականության մեջ, ընդհանրապես այդ ուղղության ակնառու դեմքերից մեկն է համաշխարհային առումով: Թողնենք նրա բաղմաղան անուններով «Տաղերը» և հիշենք հանրահայտ «Հայկ դիցազն» պոեմը⁵⁵, որ ջատագովում է հայրենասիրություն, քաղաքացիական պարտքի

49 Տե՛ս մանրամասն Հ. Պետրոսյան, Հայ գիտնականներ, հրապարակախոսներ, ժուռնալիստներ, Երևան, 1966, էջ 191—193:

50 Ա. Ղազիկյան, նշվ. աշխ., Վենետիկ, 1909—1912:

51 Տե՛ս նշվ. Գրացուցակը, էջ 24—25, 28, 64—65, 67:

52 Ս. Ազոնց, Ճարտասանություն, Վենետիկ, 1775: Ե. Սեթյան, Արհեստ ճարտասանություն, Վենետիկ, 1832: Տե՛ս նաև «Հայ նոր գրականության պատմություն», հատ. Ա, Երևան, 1962, էջ 104—115, Գ. Ստեփանյան, Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության, Երևան, 1962, էջ 121—128:

53 Տե՛ս նշվ. Գրացուցակը, էջ 31, 82, 80, 23—28, 74, նաև Հ. Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 192—193:

54 Հայկական մանրանկարչություն, հատ. Ա, Վենետիկ, 1967:

55 Ա. Բաղրատունի, Հայկ դիցազն, Վենետիկ, 1858:

գիտակցում ու առաքինություն, ընթերցողին սեր է ներշնչում հայրենի աշխարհի և ազատատենչ ու քաջամարտիկ նախնիների հանդեպ:

Հայկական կլասիցիզմի առավել ակնառու արտահայտությունը մխիթարյան հեղինակների ստեղծած թատերագրությունն է: Վերջինս հիմնականում բաղկացած է ողբերգություններից, որոնց թեման վերցված է քրիստոնեական սրբազան գրքերից և հայ ժողովրդի պատմությունից: Այս բնագավառի առավել աչքի ընկնող հեղինակներից են Ղ. Ինճիճյանը, Գ. Ավետիքյանը, Մ. Ջախջախյանը, Ե. Թումաճյանը, Ա. Բագրատունին, Պ. Մինասյանը, Է. էնտազյանը, Գ. Հյուրմյուզյանը և ուրիշներ:

Բանաստեղծության ասպարեզում Մխիթարյանների պայծառագույն դեմքը եղավ ու մնաց Ղ. Ալիշանը: Թեև մեկ տասնամյակից մի քիչ ավելի է տևել Ալիշանի բանաստեղծական ու ստեղծագործական կյանքը, բայց նրա թողած ժառանգությունը հսկայական է: «Նվագք»³⁶ (Ա—Ե հատոր) ընդհանուր խորագրի տակ նա ղետեղել է իր «Մանկունի», «Մաղթունի», «Բնունի», «Հայրունի», «Տերունի» և «Տխրունի» բանաստեղծությունների հատորները: Առանձնապես մեծ ընդունելության են արժանանում նրա «Հայրունի» գրքում ամփոփված բանաստեղծությունները, որոնք, ինչպես և Ալիշանի քնարերգության հիմնական մասը, պատմա-հայրենասիրական հենք ու բովանդակություն ունեն: Ալիշանի հայրենասիրությունը շատ խորն է, անկեղծ ու վարակիչ: Յուրաքանչյուր տող ու բառ ներծծված է բանաստեղծին սյրող այն հիմնական հույսով ու մտահոգությամբ, որը վերաբերում է անցյալի վերհուշը հայրենասիրության ու մարտական զարթոնքի ազդակ դարձնելուն: Ալիշանի «Հայոց աշխարհիկ», «Հրադդան», «Հայ հայրենիքը», «Ողբամ զքեզ Հայոց աշխարհ», «Մասիսու սարերն», «Հայ հանճար» բանաստեղծությունները, ինչպես և «Պլպուլն Ավարայրի», «Աշոտ երկաթի ծովուն Սևանա», «Լուսնկայն պերեզմանաց հայոց» պոեմները նրա քնարերգության լավագույն նմուշներից են և խոր հետք են թողել մեր գրականության մեջ: Ալիշանի քնարերգության, գեղարվեստական ստեղծագործությունների լեզվա-ոճական առանձնահատկությունները, նրանց կենդանի, կոնկրետ պատկերավորությունը, ժողովրդին հասկանալի, նրա բառ ու բանով զրբված լինելը, նրա՝ անմիջական առօրյային արձագանքելու ձգտումը կենսահաստատ թարմություն բերեցին հայ պոեզիայի անդամատանը:

Հատուկ գնահատության է արժանի Մխիթարյանների հրատարակչական գործունեությունը: Նրանց վերոհիշյալ ողջ գրական ժառանգությունը տպագրվել է իրենց միաբանության տպարանում: Այստեղ են լույս տեսել Աստվածաշնչի լավագույն հրատարակություններից մի քանիսը, մեր պատմիչների և մյուս մատենագիրների բաղմաթիվ երկեր, արխիվային-ղիվանական փաստաթղթեր, դասագրքեր և այլն: Տպարանը օտար լեզուների տառերի չափազանց հարուստ ժողովածու ունի: Այս տպարանում են ծնունդ առել բաղմաթիվ սև ու գունավոր առանձին նկարներ, ալբոմներ, պատկերազարդ հանդեսներ, քարտեզներ: Տրպարանը արժանացել է միջազգային մի շարք մրցանակների:

Մխիթարյանները գիտեն ոչ միայն ուսումնասիրության նյութ դարձնել մշակութային ամեն տեսակի գանձերը, այլև կորստից փրկել, պահպանել ու խնամել դրանք: Բավական է ասել, որ նրանց է պատկանում հայերեն ձեռագրերի երրորդ ամենահարուստ Մատենադարանը, որն ունի շուրջ 4000 ձեռա-

³⁶ Ղ. Ալիշան, Նվագք, Վենետիկ, 1857:

գիր: Դրանց մեջ քիչ չեն այնպիսիները, որոնք մատենագրական, բնագրական, գիտական, հնագրական և մանրանկարչական բացառիկ արժեք ունեն: Նրանք ունեն նաև «Մեծ Մատենադարան» և «Գիտությանց թանգարան», որոնցում պահպանվում են ոչ միայն հայ, այլև մյուս ժողովուրդների նյութական ու հոգևոր մշակույթի՝ գեղարվեստի, արհեստագործության և այլ բնագավառների հազվագյուտ նմուշներ ու իրեր:

Այսօր թեև Մխիթարյանները իրենց արդյունաշատ անցյալի աշխուժությունը չունեն, սակայն գիտական-ստեղծագործական կյանքը այնտեղ շարունակում է կենդանի մնալ՝ Հ. Կետիկյանի, Ք. Չրաքյանի, Վ. Հովհաննիսյանի, Կ. Քիպարյանի, Պ. Անանյանի, Ն. Տեր-Ներսիսյանի պատմա-բանասիրական աշխատանքների շնորհիվ:

АРМЕНОВЕДЧЕСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ ВЕНЕЦИАНСКИХ МХИТАРИСТОВ

(К 250-летию со дня основания конгрегации)

П. П. АНТАБЯН

(Р е з ю м е)

В 1717 г. в Венеции, на острове св. Лазаря, была основана конгрегация Венецианских Мхитаристов.

Обширной по своим интересам и ценной была деятельность членов упомянутой конгрегации, в особенности в области арменоведения. Наряду с исследованием политической истории Армении, ее географии, литературы, языка, искусства, философской мысли и этнографии, их богатое лексикографическое, историко-филологическое, грамматическое, переводческое, литературно-художественное наследие является большим вкладом в арменоведение.

В статье показано значение наиболее примечательных произведений мхитаристов-арменоведов в развитии вышеназванных областей арменистики.